Հաստատված է՝ ______________

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Աստաբացյան

______________________________

(ստորագրություն)

# <u>ԿԱՐԳ</u>

# <u>ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ</u>

(վերահաստատված)

Հաստատված է՝ ___________

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Աստաբացյան

___________

(ստորագրություն)

# ԿԱՐԳ

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ



Ուսանողը իրավունք ունի բողոք ներկայացնել ինստիտուտի ուսումնական գործընթացի հրամանների, կարգադրությունների եւ այլ խնդիրների վերաբերյալ, որոնք սահմանափակում կամ խախտում են ուսանողի իրավունքը: Բուհի ղեկավարությունը քննարկում է ուսանողի պահանջը համապատասխան ՀՀ օրենսդրական, ենթաօրենսդրական նորմերի եւ ինստիտուտի կանոնակարգի:

Ուսանողը բողոքը կարող է ներկայացնել գրավոր կամ բանավոր ձեւով:

Բողոքի ներկայացման ժամկետները սահմանափակված չեն: Գրավոր

բողոքը պարտադիր կարգով պետք է ստորագրված լինի: Բողոքի դիտարկմանժամկետը 1 ամիս է: Առանձին դեպքերում, երբ կա անհրաժեշտություն հավելյալ ստուգումների բողոքի դիտարկման ժամկետը ռեկտորի հրամանով կարող էերկարաձգվել եւս 1 ամսով: Դիմում-բողոքների դիտարկումը կարող է լինել վարչական եւ դատական կարգով: Բոլոր այն դեպքերը, երբ խախտվել է օրենքը, ուսանողի քաղաքացիական իրավունքները եւ ինստիտուտի սահմաններում եւ խնդիրը չի ստանում ուսանողին բավարարող լուծում, ուսանողը իրավունք ունի գանգատվել դատական կարգով: Դիմում բողոքի լուծման վերաբերյալ ինստիտուտի ղեկավարությունը պարտավոր է գրավոր կերպով հայտնել ուսանողին դիմումը ներկայացնելու օրվանից ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում: